Հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 16-ից 17-ը Ավստրիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**
   Վահրամ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ՝ «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ), Գլխավոր տնօրեն:

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա), 2024թ. դեկտեմբերի 16-ից 17-ը:

4. **Հրավիրող կողմը**
   Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   Մասնակցել ԱԷՄԳ կողմից կազմակերպված «Եվրոպական և կենտրոնական Ասիայի անվտանգության համակարգի ղեկավար կոմիտեի» (այսուհետ՝ Կոմիտե) 13-րդ նստաշրջանի աշխատանքներին, որը ներառում է իր մեջ 23 ԱԷՄԳ անդամ երկրներ:

6. **Քննարկված թեմաները**
   - 2024թ. համար պլանավորված աշխատանքների կատարողականի քննարկում;
   - 2025թ. ծրագրի քննարկում և առաջադրանքների ձևավորում չորս աշխատանքային խմբերի շրջանակում:
   - Ստեղծել նոր աշխատանքային խումբ, որը կզբաղվի փոքր մոդուլյար միջուկային էներգաբլոկների (SMRs) հարցերով:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**
   Հանդիպում և առանձնազրույցներ եղավ ԱԷՄԳ կողմից 13-րդ նստաշրջանի աշխատանքները կորդինատացնող պարոն Կիմ Դոհենգի հետ, Բուլղարիայի ներկայացուցիչ պարոն Նիկոլայ Գրոզևի, Տաջիկստանի ներկայացուցչի և այլն:

Բացի օրակարգում ընդգրկված հարցերից, առանձին քննարկման առարկա դարձան միջուկային տեղակայանքներին տեխնիկական աջակցություն ցույց տվող կազմակերպությունների դերի և նշանակության խնդիրները և այլ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռքբերվեց 23 անդամ երկրների միջև նիստում առաջադրված խնդիրներին օպերատիվ լուծում տալու վերաբերյալ:

13-րդ նստաշրջանում ստորագրված որոշումներ և փաստաթղթեր չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առաջարկություն եղավ միջանկյալ նիստեր տարբեր երկրներում կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ, նախապես ժամկետները համաձայնեցնելով տվյալ երկրի գերատեսչական մարմնի և Կոմիտեի հետ: Նպատակահարմար համարվեց ՀՀ-ում նման նիստ անցկացնել 2026թ. կամ 2027թ.:

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
26.12.2024թ.